Մրցույթի հայտարարություն

«Արարատի մարզի Ազատաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2021թ-ի օգոստոսի 27-ի N 1380-Ն որոշման,ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ «Արարատի մարզի Ազատաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են «Արարատի մարզի Ազատաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2021 թվականի հոկտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 -ից մինչև ժամը15:00 -ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի նոյեմբերի 30-ին՝ ժամը 14:00-ին, « Ազատաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում:Հասցեն՝ գ.Ազատաշեն, 3-րդ փողոց , 1-ին փակուղի, թիվ 4:

Տեղեկությունների համար դիմել՝ խորհրդի լիազորված անդամ Անուշ Հայրապետյանին ՝ հեռ.(+374)93 995242